Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Բժ. Ս. ՊԼՈՏՈՎՍԿԻ

ՉՔՆԱՂ ՄԱՐՕՆ

№ 8

891.71
Պ-69

1905
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ
Հրատ. տիկին Զաբելի

19 NOV 2010
22 JUN 2007
891.71
Ղ-69

ՁՔՆԱՂ ՄԱՐՕՆ

Դրամատիկական էսքիզ մի գործողությամբ

ԲԺ. Ա. ՊԼՈՏՈՎՍԿԻ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1905·

22 JUL 2013

12891

Дозволъ цензъ. С.-Петербургъ 28 Марта 1905 г.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ի ԳԱ
АН АрмССР
Մ. Մեսրոպի անվան
Мясникяна

32711-61

„Пушкинская Скоропечатня“ Лештуковъ д. 4.

Այս դրամատիքական էտիւդի հեղինակը 1903 թ. ճանապարհորդում էր Փոքր Ասիայում։ Նա իմիջի այլոց եղաւ և Տրապիզոնում և նորա շրջակայքում որսորդեց։

Օգոստոսի 15-ին, Ս. Աստուածածնի տօնի օրը, հեղինակը պատահաբար հանդիպեց ուխտաւորների մի մեծ բազմութեան, բաղկացած կանանցից և տղամարդկանցից, որոնց թւում կային ոչ միայն արեւելեան քրիստոնեաները-յոյները, հայերը, այսորիները, այլ և մահմետականներ։ Սոքա ամենքը դիմում էին դէպի առանձնացած մի բլրակ, որի վերա հսկայական կաղնիների մէջ կանգնած էր կառուցած մի խաչքար։

Ուխտաւորներից ամէն մէկը, հասնելով այնտեղ, շտապում էր իր շորից կտրել մի կտոր և կախ տալ Մարօի խաչքարից։

Ժողովրդական զրոյցը, ինչպէս հաղորդեց հեղինակին մի ծեր կրօնաւոր, պատմում է՝ թէ ով որ այդ Ս. տօնին, լինի նա քրիստոնեայ թէ մահմետական, այդ խաչքարից կախ կտայ իր շորից մի կտոր, մեղքերի թողութիւն

կգանէ և երիտասարդութիւն, զեղեցկութիւն, քաջութիւն ձեռք կբերէ։ Այս սուրբ վայրում, ծեր կրօնաւորի խօսքով, հանդչում է մի չքնաղ աղջկայ աճիւն, որը իր քահանայ հօրը գերութիւնից ազատելու համար սիրտ արաւ մեն մենակ, առանց զէնքի, դնալու քուրդ Բէյի բանակը, որպէսզի իր հօր համար գթութիւն խնդրէ։ Բայց երբ նորա աղերսները արդիւնք չունեցան, նա սպանեց քուրդ հրէշին և իր ժողովուրդը ազատեց նրա բռնութիւններից և հարստահարութիւնից։

Այդ օրուանից շատ դարեր իրար յետևից կլորուեցան ու անցան, բայց գեղեցիկ Մարօի յիշատակը, բերնէ բերան թռչելով, ապրում է ժողովրդի յիշողութեան մէջ և ամէն տարի ուխտաւորների հոծ բազմութիւն խմբում այս սուրբ վայրում։

Այսպէս յարգել գիտէ արևելեան ժողովուրդը մարդու քաջութիւնը և այդ նոյն իսկ կանայք, որոնք, ինչպէս և մահմետականները և նոցա հպատակ քրիստոնեաները դեռ երկար պէտք է տանջւեն և կռւեն ազիտութեան և բռնութեան դէմ։

Եւ իրօք այնտե՛ղ, որտեղ թագաւորում է պաշտօնեաների կամայականութիւնը, ազգա հոգևորականութեան սահմանափակ աշխարհա-

հայեցողութիւնը, հարեմական կեանքը, ընդհանուր տնտեսական և հասարակական ծանր պայմաններ - անկոյս ազիտութիւն և տարկական վիճակ, կրկնում ենք, այնտեղ միայն կռւով կարելի է ճշմարիտ ազատութիւն ձեռք բերել։

ԶՔՆԱՂ ՄԱՐՕՆ

Դրամատիքական էսքիզ մի գործողութեամբ.

ԼԵՌՆԱԿԱՆ ՔՐԴԵՐԻ ԿԵԱՔԻՑ

Գործողութիւնը կատարւում է XV-րդ դարում Տրապիզոնի շրջակայքում։ Նոսր անտառ։ Արդուլ Բէյի բանակը. կապոտած գերի կանայք. պարկերով աւար. բեմի խորքում ընկած են մի քանի պրկւած ձեռներով գերի տղամարդիկ և նոցա թւում երկար, սպիտակ միրուքով մի ծերուկ-քահանայական վերարկուով։ Բեմի առաջին մասում մի քանի դինւորներ մաքրում են զէնքերը։ Բեմի աջ կողմում ընկած են վրանները։ Օրը լուսանալու մօտ է։

Արդուլ Բէյը 50-60 տարեկան.
միւսները 20-30 »
Մարօն 18 »

Լսւում է երգի ձայն (խումբը)
Փատիշահի քաջ ընտրեալը
Ապրում է առանց ցաւի, հոգսի,
Արդար ամենքի ու Ալլահի առաջ,
Ուտում, խմում, քէֆ է քաշում անհառաչ։
Մենք զօրեղ ենք, մեզնից սարսում են
Եւ հաւատարիմ սարուկները անոգի,
Եթէ չեն ուզում դրկւել ձեռներից ու լեզուից։
Երջանիկ են զօրեղները և տարէ-ցտարի
Ալլահը պարգևատրում է նոցա լի ու լի։
Զօրեղը տէր է ժողովրդին,
Զօրեղը մօտ է Փատիշահին։

ԴԷՐՎԻՇ. (ներս է մանում և ականջ դնում երգին) Դուք երգում էք. «Մենք զօրեղ ենք, մեզնից սարսում»... Ականջ դրէք ծերուկիս Մահմէտի ընտրեալներից մէկն եմ ես, նորա ամենահաւատարիմ, սակաւաթիւ ծառաներից մինը. մարդարէի արդար հայացքին տհաճ են ձեր գործերը։

Աչքերս կուրացան գթութեան արցունք թափելով այն խեղճերի համար, որոնց մարդ-

կային իրաւունքները դուք ոտնակոխ էք անում։ Հառաչների և արցունքի վրա հիմնուած իշխանութիւնը հաստատուն չի՛ կարող լինել։

ԱՌԱՋԻՆԸ. Է՛ն չես ասում, Դէրվիշ, ի՛նչ որ պէտք է։ Կամ մեզ հետ ուրախացիր, կամ լռէ, եթէ լացից զատ ուրիշ բան չգիտես։ Այսօր մենք ուզում ենք և մի նոր յաղթութիւն։

ԴԷՐՎԻՇ. Ո՞ւր է թէ ես խլանայի էլ, ինչպէս և կուրացայ։ Միայն անմեղների լացն ու կոծն եմ լսում ես։ Մահմէտն էլ, Քրիստոսն էլ մեծ մարգարէներ են և բոլոր մարդիկ—եղբայրներ... այն ինչ իմ հոգու առաջ պատկերանում են կողոպտուած, արիւնով ներկուած, աւեր աւերակ գիւղեր։

Թող նզովեալ լինեն ինձ հալածող այս արիւնոտ տեսիլները։

ԱՌԱՋԻՆԸ. Լռէ՛, հայր...

ԴԷՐՎԻՇ. Թող ուրիշը կոչի աւազակների հայր։

ԱԲԴՈՒԼ ԲԷՑ. Խելքդ կորցրել ես, Դէրվիշ. մի՞թէ, տեսողութիւնից զրկուելով, խաւարի մէջ է խարխափում և դու անկարող ես տեսնել ամէն ինչ ընկճող մեծութեան, իշխանութեան փայլը։ Լռէ՛, Դէրվիշ, թոյլը միայն պէտք է փառաբանէ զօրեղների գործերը. այս է ձեր գոյութեան խորհուրդը յօգուտ Փաթիշահին և նորա բախտաւոր ընտրեալների։

ԴԷՐՎԻՇ. Սոսկալի է քո լեզուն. Փաթիշահի ընտրեալը պէ՞տք է իւր ժողովրդի ծառան լինի. ընտրեալի սիրտը թող բաբախէ միայն հայրենիքի ցաւով. ժողովրդի հառաչը թող նորա հառաչը լինի։ Ո՛չ, դու ժողովրդի ծառան չես, քո գործերը Փաթիշահի ծառային արժանի գործեր չեն։ Իմ բերանը գովք չի կարդայ գործերիդ։ Դու քնեցրիր մարդկանց խիղճը, բայց վա՜յ քեզ, երբ նա զարթնէ։

ԱԲԴՈՒԼ ԲԷՑ. Հերի՛ք, պառաւ բու. Այլահը իզուր թողել է լեզուդ, զրկելով քեզ աչքերից։ Գո՛հ եղիր, որ էս բոպէիս ձեռքս աւելորդ թոկ չկայ, որ քեզ խելքի բերեմ։ Փա՛ռք տուր Այլահին, որ ինձ այսօր բարեսրտութիւն է ներշնչել։

ԴԷՐՎԻՇ. Աւա՜ղ, Այլահը շա՛տ է ողորմած դէպի նա, ով արցունքով և մարդկային արիւնով է կերակրուում։ Վաղուց մեռել է ձեր հոգին...

ԱՌԱՋԻՆԸ. Մենք տասնեակ տարիներ ի փառս անգին Փաթիշահի աշխատում ենք։ Մենք պորտաբոյծներ չենք—սրբութեամբ կատարում ենք հրամանատարի պատուէրները։ Այժմս ամէն ինչ խաղաղ է, թող այժմ աշխարը տեսնէ, որտեղ է մեր ոյժը (ցոյց տալով զէնքը)։ Գլուխս վկայ, լաւ օր էր... կռիւ չեմ ասում

—օրինաւոր նախճիր։ Ինձ բաժին ընկաւ յիսուն հոգի...

ԵՐԿՐՈՐԴԸ. Քո յիսունը ո՞ւր. ես Գիւղի կէսը մի տեղ քշեցի ու ծերերին ոչխարների պէս մորթոտեցի. իսկ կանանց իրենց լակոտների հետ փակեցի եկեղեցում և կրակ տուի· կրակից ու ծխից ամենքը կոտորուեցին...։

ԵՐՐՈՐԴԸ. Հա, հա, հա· իսկ ես այն ինչ հարեմս լցրի...։ Արեւ՛ս վկայ, ժամանակը իզուր չկորցրի։ Երկար ջոկեցի, ջոկչկեցի, և միայն 12 հոգու ընտրեցի, բայց Ալլահը վկայ, ինքը Աբդուլ Բէյը ոչ մէկին չէ՛ չի ասի։ Գեղեցկուհիներից ամենամեծը հազիւ 15 տարեկան լինի։

ԱԲԴՈՒԼ ԲԷՅ. (մի քանի ժամանակ վրանի դռանը ականջ դնելով)· Լռեցէ՛ք, լակոտներ, թող կնկտիք պարծենան։ Ե՛ս ձեզ օրինակ. հօրս հետ դեռ մանուկ օրից արիւնոտ ձեռներով հունձ էի անում և իմ սուրը գթութիւն չգիտէր։ Հարկահանութեան ժամանակ գիւղերը աւեր աւերակ էի դարձնում։ Մէկին պատժում, միւսին բանտի մէջ խեղդում. ամենքի վախկոտ լեզուները քոքից պոկում։ Սարուկներին ինչի՞ն է լեզու։ Հառաչել և ոռնալ գիտեն և չախալները։ Լեզուն միայն նորան պէտք է, ով մեծ Փաշիշահի ողորմութեամբ կոչուած է փառքի, պատուի, իշխանութեան...

(Նկատելով ծեր դերուն) Ո՞ր ծերուկ, դեռ սա՞ղ ես, բարեկամ. էլ սիրտ չե՞ս անում ձէնդ բարձրացնել։ Հա՞լ չունես... Հա, հա հա։ Արդարութի՛ւն էիր փնտրում։ Խաբեցի՛ր, բարեկամ. սրի՛ ծերին է արդարութիւնը։ Աստուած սարուկին սխալմամբ է լեզու տուել. սարուկին միայն ձեռնե՛ր են պէտք, լսո՞ւմ ես, միայն ձեռնե՛ր, որ Փաշիշահի ծառաներին իրենց մշտական հարկը լի ու լի տան։ Իսկապէս նոցա համար մի ձեռքն էլ հերիք է, թէ չէ երկրորդով դրել կսովորեն... (Զինուորներին) Էյ, լսեցէ՛ք. արշալոյսին, դեռ օրը չծագած, գեաւուրը այս շների հետ պէտք է պատժուի... բայց դուք, լակոտներ, պատժեցէք հունարով, այնպէս պատժեցէք, որ միւս սարուկները էլ ձէն ծպտուն հանելու շտահ չունենան...

Նախ թեթև եարալու արէք, ապա մարմանդ կրակով այրեցէք...։

Հ՛ր, ծերուկ, այժմ գո՞հ ես ինձանից։

Բարի ճանապարհ։ Արդարութիւնը մեր սրի ծէրին է. հա՛, հա՛ հա, մեր սրի՛ ծէրին...։

(Ուզում է վրանը մտնել. զինուորները տանում են գերիներին։ Թփերի յետևից դուրս է թռչում մի աղջիկ կարմիր ֆէսը գլխին, դէմքին թեթև շղարշ, կտրում է նորա առաջը,

ընկնում է ծնդների վրա և աշխատում է նորա ձեռքը բռնել։

ԱԲԴՈՒԼ. Կաց, կաց, գեղեցկուհի, էս որտեղից դու... ի՞նչ գործ ունես այստեղ։ (Դէմքը դիտելով) ի՞նչ գեղեցիկը, ի՞նչ հրաշալին ես դու։ Ալլահը իր անբաւ ողորմութեամբ փառաւոր գործերիս համար ուղարկում է ինձ քո գողտրիկ աչերը... ՝ եթէ բոլոր տղամարդիկ այնպէս քաջ լինէին, ինչպէս դու գեղեցիկ ես, դլուխս վկայ, ես Աբդուլ Բէյ չէի լինի։

Խօսէ՛, գեղեցկուհի, ինչով կարող եմ քեզ պիտանի լինել։

ՄԱՐՕ. Դիտե՛մ, զօրեղ ես դու, իշխողների մէջ ամենազօրե՛ղն ես դու։ Քե՛զ պէսների ձեռքին սուլթանները խաղալիք են միայն։ Դիտեմ, քաջ սիրտ ունես դու, գթութիւն և սէր բուն չունէ՝ այնտեղ. դիտենք, ի՛նչ որ հակառակ է քո երկաթէ կամքին, ամէնը ամէնը մահուան է դատապարտուած... բայց խղճա՛... գթա՛ աղաչում եմ քեզ... խղճա՛ հօրս...

ԱԲԴՈՒԼ. Հա՞յրդ ով է։

ՄԱՐՕ. Նոր նրան պատժելու հրամանը տուիր։

ԱԲԴՈՒԼ. Ծերո՞ւկը։ Արշալոյսին նա պիտի մեռնէ։

ՄԱՐՕ. Օ՜, խղճա՛, խղճա, ողորմէ՛, տէ՛ր իմ։ Օ՜, մի՛ մոռանա, կայ մարդկային դատաստան, բայց կայ և Աստուծոյ։ Տէ՛ր իմ, ողորմէ՛. նա վերջինն է մեր ընտանիքից, որը կործանեցիր դու և քո հլու ծառաները. նա շատ թոյլ և անզօր է, որ նորա կեանքը քեզ համար վտանգաւոր լինի։ Այն ձայնը, որ նա համարձակուեց քո դէմ բարձրացնել, շատ անզօր է, որ Փատիշահի ականջին հասնէ և կիսլանայ անշուշտ խորհրդատուների կողմից։ Կեանքումդ դոնէ մի՛ անգամ դուրթ ունեցիր դէպի նոցա, որոնք իրենց ամբողջ կեանքը ծառայում են քո և ծառաներիդ հաճոյքների համար... Ա՜խ, խղճա՛, տէր...

ԱԲԴՈՒԼ. Ինչ լա՛ւ խօսում ես։ Ճշմարիտ, որ Ալլահը քեզ ինձ արքայական պարգև է ուղարկել։ Դէ՜, ուրեմն, լսէ՛, գեղեցկուհի, բախտաւոր բոպէի հասար։ Հօրդ համար ես աղաչում, լա՛ւ, ես բարի եմ, նորան ազատութիւն կշնորհեմ, եթէ միայն այդ պէ՛տքէ սարուկին, բայց միայն մի՛ պայմանով. այս գիշեր յօժար կամքովդ իմը պիտի լինես. միայն մի՛ գիշեր. հասկացա՞ր, այնուհետև երկուսդ էլ ազատ էք։

ՄԱՐՕ. (յետ թռչելով). Անառա՛կ ծերուկ, պատիւս թանդ է կեանքիցս։

ԱԲԴՈՒԼ. Հա, հա, հա. Զարանալ մի, գեղեցկուհի, միևնոյնն է, դուխմ հարճն ես, որ կաս, հերի՛ք մի նշան անեմ ծառաներիս: Սրան մի տես: Առաջին անգամն եմ լսում, որ մի կին չի ուզում Աբդուլին պատկանել: Այդ պատուին կանայք նախանձում են: Դէ՛, ընտրէ. եթէ յօժարակամ իմը լինես, հայրդ ազատ է. իսկ եթէ զօռով, արևաճաղին հայրդ մեռած կլինի: (Զինուորներին) Էյ, արևաճաղին դեռևուրը պէտք պատժի, չպէ՛տք այլի—գնդակահար լինի: (Մարօին) Լսեցի՞ր: Դէ՛, շտապէ՛, քանի ուշ չէ: Արշալոյսը մօտ է: Ես գնում եմ... (գնում է)..

ՄԱՐՕ. Կաց. կաց...

ԱԲԴՈՒԼ. Եթէ յօժարակամ իմը կլինես, հայրդ ազատ է... Ահա՛ վրանիս մուտքը (գնում է):

ՄԱՐՕ. (Նորա յետևից) Ա՜խ, գթա՛(ձեռները կոտրտելով) ա՜խ Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ այսպիսի գնով գնեմ հօրս ազատութիւնը: (Վրանի առաջ սպառնալից) դո՛ւ փախցրիր մօրս, հարեմումդ տանջւում են քոյրերս, այժմս այս վերջին ունեցածս էլ ուզում ես խլել... Այս հրեշները իրենց քմահաճոյքների համար ամէ՛նը, ամէ՛նը խլում են մեզնից. իրենց անյագ կրքերին յագուրդ տալու համար, խղճերը մեռցրած, ամէն ինչ պղծում, տակն ու վրա են անում...

ԱԲԴՈՒԼ. (Վրանից) Սպասում եմ, տե՛ս, արշալոյսը մօտ է:

ՄԱՐՕ. (Մի քայլ է անում դէպի վրանը, և կանգ առնում) Աստուած իմ, ինչո՞վ է քեզ բարկացրել մի ժողովուրդ, որ օր ու գիշեր, անդադրում, վիզը կոր աշխատում է քէների քմահաճոյքի համար, որին տգիտութեան մէջ խեղդում, տանջում են, բանտերում հազարներով փթեցնում. իսկ ով համարձակւում է ծպտուն հանել, գրել գիտցող ձեռքն կտրում ու կարկում խօսող բերանը:

Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ, ինչո՞ւ համար տանջում ես հազարաւորներին քէների քմահաճոյքի համար: (Դառնալով հօրը) Ների՛ր ինձ, ների՛ր, հայրի՛կ: Մնաս բարեաւ: Մարդիկ եղբայրներ են, ասում էիր դու և քո պատուէրը սրբութեամբ պահելով, եկայ այստեղ մեն մենակ: Մարդիկ եղբայրնե՛ր են... բայց նոցա մէջ հրէշնե՛ր էլ կան և ահա՛ նոքա...

ԱԲԴՈՒԼ. Լռի՛ր, գեաւուրի աղջիկ. թէ՞ ուզում ես վաղը և եթ լեզուիցդ զրկւել:

ՄԱՐՕ. Արհամարանքի՛ արժանի եմ ես, հայրիկ, որ այստեղ խնդրելու եկայ, սոցանից մի-

այն պահանջե՛լ կարելի է։ Այն ինչ դու քարոզում էիր. ոյժը բռնութեան մէջ չէ, այլ սիրոյ։ Մի՛ լար, հայրիկ, արտասուքը սոցա սիրտը չի շարժի։ Թող կորչեմ այստեղ և ես, որտեղ թագաւորում է միայն բռնութիւնը, թող իմ դիակը նոցա խաղալիք դառնայ, բայց աստուածային շնորքը, իմ ազատ ոգին, որ և՛ զօրեղին, և՛ թոյլին հաւասարապէս արւած է, ոչ ոք չի՛ կարող մեռցնել. երբէ՛ք։

Ա.ԲԴՈՒԼ. Ինչ հրաշալի մարմին և հոգի ունէ սա։ Ալլահը վկայ, պատրաստ եմ սորան հարեմիս թագուհին դարձնել. թող այն ժամանակ արար աշխարհքի սուլթանները նախանձից տրաքւեն։

ՄԱՐՕ. Տե՛ս, հայրիկ, (յոյց տալով դէպի երկինք) մէրս երկնքից օրհնում է մեզ։ Օ՜, անդին մէրիկ, լսում եմ ահա քո մրմունջը։ Մի՛ վախենա, պատիւս պաշտպանելու չափ սիրտ կունենամ, թէկուզ այդ կեանքիս գնով։ Օրհասս ահա մօտ է. մնաս բարեաւ, հայրիկ։

Ա՜խ, Աստուա՛ծ իմ, երազ չէ՞ արդեօք այս։

Ա.ԲԴՈՒԼ. Էյ, գեաւուրի աղջիկ, ծղծղում ես. տե՛ս, ուշ կլինի...

ՄԱՐՕ. Անառակ հրէշ. թող իմ և հազարաւոր անմեղների անէծքը գլխիդ թափի։

(Բարձր) գալի՛ս եմ (դրեթէ միաժամանակ հեռուից լսւում է հրացանի տրաքոցը)։

Ա.ԲԴՈՒԼ. (Կատաղած շտապով դուրս վազելով)։ Բայց հաշիւը մէկ է։ (Մարօին) յամենայն դէպս դու իմ հարեմն ես, որ կաս։ Էյ, բռնեցէ՛ք սորան, կապեցէ՛ք և տարէ՛ք վրանս։

ՄԱՐՕ. (Ազատւելով իրեն բռնողներից, շընչասպառ) Կորէ՛ք, դարշելիներ... Ես ինքնակամ... Ես գնում եմ... (Աբդուլի մօտ վազելով, դուրս է քաշում նորա դաշոյնը և խրում Աբդուլի կուրծքը)։ Մեռի՛ր և դու, ժողովրդի արիւնխում բռնակալ։ Թող իմ մահը հազարաւորների համբերութեան բաժակը լցնէ. եթէ ոչ բարութեամբ, դէ՛ ուրեմն չարութեամբ... (սպանում է իրան)

Ա.ԲԴՈՒԼ. (Մօտը եղողների թեւի վերա ընկնելով) Օձի ծնունդ... (խռխռում է)։

Ա.ՌԱՋԻՆԸ. Աբդուլի մէկը կմեռնէ,
Տեղը միւսը կը ծնէ.
Եղակի են Մարօները,
Մեր թիւը, հազարներ։
Աբդուլը շատ բարի էր,
Միայն մի՛ ձեռքը կտրում էր,
Կդայ մէկ ուրիշ ահաւորը,
Ձեր երկու ձեռքն էլ կկարէ։

ՀԱՅԿԱՆ ԳՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННАЯ БИБЛИОТЕКА
ZUUՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
39711-61

ԴԷՐՎԻՇ. Ո՛չ. հոգիս ուրիշ բան է վկայում. կգայ ժամանակ, երբ ջինջ եթերում թագաւորող ճշմարտութիւնը աստղերի բարձունքից կիջնէ մարդկանց սրտերի մէջ և երկրիս վերա կտիրէ լուսոյ թագաւորութիւնը։

Վարագոյր.

Բժ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ

նոր լոյս տեսած գրքոյկները.

1. Գործարան, թէ՞ երկրագործութիւն. . 15 կ.
2. Անապատութիւն և կախարդութիւն 20 „
3. Մտերմական խորհուրդներ պատանիներին . . 20 „
4. Գոյութեան կռիւ . . . . . 20 „
5. Ռուզոլֆ Վիրխով . . . . . 25 „
6. Սէր և խանդ . . . . . 20 „
7. Պառնկութիւն և անառակութիւն . 20 „
8. Նուէր հայ գինուորին (մամուլի տակ) „

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ

վերջին հրատարակութիւնները.

1. Ընտրութիւն կամնատուների. . . 15 կ.
2. Ռուզոլֆ Վիրխով . . . . . 25 „
3. Հպարտ հոգու երդերից . . . . 30 „

Հ. Համբարձումեան

Դիմել հայ գրավաճառ

ՀՀ Ազգային գրադարան
NL0327058

12.391

ՄԵՐ ԼԻԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

1. Քարը կրգում է . . . . . 10 կ.
2. Ճշմարիտ մեծություն . . . . 7 „
3. Արդար ժերունին . . . . . 10 „
4. Մեծ ատն . . . . . 10 „
5. Նոր լոյս . . . . . 10 „
6. Ուսման սերը . . . . . 7 „
7. Մանկան մտա և վերջին խոսք . . 7 „
8. ՉԻՆԱՂ Մարդն . . . . . 5 „
9. Լրատես (մատուցի տակ) . . . .

Բոլոր գրքերը 30

ԳԻՆՆ Լ25 ԿՈՊ.